ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-34-Ո-86
2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՏԵՍԱԿԸ ԵՎ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետը, 94-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Սահմանել դատական կարգադրիչի կրծքանշանի տեսակը և ձևը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2018թ. օգոստոսի 23
ք. Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
բարձրագույն դատական խորհրդի
2018թ. օգոստոսի 23-ի թիվ ԲԴԽ-34-Ո-86
որոշման

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՏԵՍԱԿԸ ԵՎ ՁԵՎԸ

1. Դատական կարգադրիչի կրծքանշանի (այսուհետ՝ Կրծքանշան) անվանումն է «Դատական կարգադրիչների ծառայություն»:

2. Կրծքանշանը դատական կարգադրիչների ծառայության ընթացքում փակցվում է դատական կարգադրիչի համազգեստին:

3. Կրծքանշանն ունի 80մմ երկարություն, 60մմ լայնություն՝ վերևի և ներքևի մասերում կորացված, և 1,5մմ հաստություն: Վերևի կորի տակ 9մմ երկարությամբ, 7մմ լայնությամբ և 1,5մմ հաստությամբ թվերով գրվում է կրծքանշանի հերթական քառանիշ համարը: Համարի ներքևում՝ երկու տողով, 3մմ երկարությամբ և 5մմ լայնությամբ մեծատառերով գրվում են «ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ» և «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» բառերը: Դրանց ներքևում՝ կենտրոնական հատվածում, 35մմ երկարությամբ և 35մմ հաստությամբ տեղադրվում է դատական կարգադրիչների ծառայության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի թիվ 43-Ա որոշմամբ սահմանված ձևի խորհրդանշանը: Կրծքանշանի վրա թվերը փորագրվում են սև գույնով, իսկ տառերը և խորհրդանշանը ուրվագծվում են սև գույնով: Այն պատրաստվում է արծաթափայլ մետաղից:

4.Կրծքանշանը հետևի մասում ունի հագուստին ամրացնելու հարմարանք:

Կրծքանշանի ձևը՝